

ՄԻԱՄԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2020

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 2

Խմբի համարը
Նստարանի համարը



Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի սոսուցվում: Սոսուցվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարդում: Պատասխանների ճնարդի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

1 Սնկերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) մուկորը խմորասունկ է
- 2) խմորասնկերը միաբջիջ են
- 3) սնկերը իրենց մարմնում կուտակում են զյուկագոն ածխաջուրը
- 4) դրոժը և պենիցիլը բորբոսասնկեր են

2 Ω՞ր բույսն է պատկանում երկշաքիլավորների դասին.

- 1) սոխը
- 2) շուշանը
- 3) ձմերուկը
- 4) ցորենը

3 Թվարկվածներից որո՞նք են բնորոշ միջատների արյունատար համակարգին.

- 1) փակ արյունատար համակարգ և երկխորշ սիրտ
- 2) փակ արյունատար համակարգ և խողովակաձև սիրտ
- 3) բաց արյունատար համակարգ և օղակաձև հաստ պատերով անոթներ
- 4) բաց արյունատար համակարգ և խողովակաձև սիրտ

4 Ինչի՞ առկայությամբ են մողեսները տարբերվում գորտներից.

- 1) կերակրափողի
- 2) կրծքավանդակի
- 3) կոյանոցի
- 4) կոպերի

5 Ω՞ր մկաններին է պատկանում քոչունների թևերի իջեցման հիմնական դերը.

- 1) ենթանրակային (կրծքային փոքր)
- 2) ենթանրակային և միջկողային
- 3) կրծքային մեծ
- 4) միջկողային

6 Մարդու զիսուլեղի ո՞ր բաժնում են գտնվում քնի, քաղցի, ծարավի, ջերմակարգավորման կենտրոնները.

- 1) կամուրջ
- 2) միջին ուղեղ
- 3) երկարավուն ուղեղ
- 4) միջանկյալ ուղեղ

7

Ե՞րբ է առաջանում մարդու քրոնզախտ հիվանդությունը.

- 1) մակերիկամների կեղևային շերտի հորմոնների անբավարարության դեպքում
- 2) ենթաստամոքսային գեղձի թերգործառույթի հետևանքով
- 3) մակերիկամների միջուկային շերտի հորմոնների անբավարարության դեպքում
- 4) ենթաստամոքսային գեղձի գերգործառույթի հետևանքով

8

Ո՞ր պնդումն է սխալ մարդու անդաստակային օրգանի կառուցվածքի վերաբերյալ.

- 1) երեք կիսաբոլոր խողովակները փոխուղղահայաց են
- 2) երեք փոխուղղահայաց պարկերը լցված են հեղուկով, որը շարժվում է դիրքի փոփոխությունից
- 3) կազմության մեջ մտնում են ձվածև և կլոր պարկիկները
- 4) կիսաբոլոր խողովակները պարունակում են հեղուկ

9

Մարդու օրգանիզմում ո՞ր ուկորներն են հոդավորված.

- 1) ագրորոսկրը և կոնքոսկրը
- 2) պոչուկային բաժնի ոսկրերը
- 3) սրբոսկրը և կոնքոսկրերը
- 4) կրծոսկրը և կողոսկրերը

10

Ինչի՞ ազդեցությամբ է տեղի ունենում մարդու սրտի աշխատանքի դանդաղումը.

- 1) ացետիլխոլինի և կալցիումի իոնների
- 2) սիմպաթիկ նյարդային համակարգի
- 3) պարասիմպաթիկ նյարդային համակարգի
- 4) կալիումի իոնների և աղրենալինի

11

Ի՞նչ է կատարվում մարդու օրգանիզմում միջավայրի ցածր ջերմաստիճանային պայմաններում.

- 1) նեղանում են մաշկի մազանոքների լուսածերպերը
- 2) աճում է դեպի մաշկ հոսող արյան քանակը
- 3) մեծանում է ջերմաստվությունը
- 4) մաշկի արյունատար անոքները լայնանում են, և փոքրանում է արյան հոսքի արագությունը

12

Մարդու օրգանիզմում որտե՞ղ է քացվում ընդիհանուր լեղածորանը.

- 1) կույր աղու հիմքում՝ հաստ աղու մեջ
- 2) ենթաստամոքսային գեղձի մեջ
- 3) տասներկումատնյա աղու մեջ
- 4) ուղիղ աղու մեջ

13

Ո՞ր պնդումն է սխալ մարդու արյան մակարդման վերաբերյալ.

- 1) քրոմբի կազմի մեջ մտնում է ֆիբրին
- 2) քրոմբի կազմի մեջ մտնում են քրոմբոցիտներ
- 3) լուծելի սպիտակուցը վերածվում է անլուծելի սպիտակուցի
- 4) ֆիբրինը ազդում է ֆիբրինօգենի վրա՝ նրան դարձնելով քրոմբին

14

Ո՞ր շարքում են թվարկված միայն պենտոզները.

- 1) գլուկոզը և ֆրուկտոզը
- 2) ֆրուկտոզը և դեզօքսիոֆրոզը
- 3) դեզօքսիոֆրոզը և ռիբոզը
- 4) ֆրուկտոզը և գալակտոզը

15

Ի-ՈՆԹ-ի մոլեկուլում ո՞ր եռյակին է համապատասխանում փ-ՈՆԹ-ի ՈՒԱՅ գաղտնազրող եռյակը.

- 1) ԱԹԳ
- 2) ՈՒԱԳ
- 3) ԹԱՑ
- 4) ԱՈՒԳ

16

Բակտերիաների վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) չունեն ձևավորված կորիզ
- 2) ԴՆԹ-ն սպիտակուցի մոլեկուլների հետ համալիրներ չի առաջացնում
- 3) բջջապատր կազմված է սպիտակուցներից, ածխաջրերից, հանդիպում են նաև լիպիդներ
- 4) խոզուկ, հեպատիտ, պոլիոմիելիտ, ծաղիկ հիվանդությունների հարուցիչները բակտերիաներն են

17

Ո՞ր նյութերի սինթեզն է բնորոշ ողորկ էնդոպլազմային ցանցին.

- 1) ԱԵՖ-ի և նուկլեինաթթումների
- 2) ածխաջրերի և լիպիդների
- 3) սպիտակուցների
- 4) նուկլեինաթթումների

18

Հետևյալ կառուցվածքներից որտե՞ղ չի պարունակվում ՈՆԹ.

- 1) ցենտրիոլներում
- 2) կորիզակում
- 3) Գոլցիի ապարատի թաղանթների վրա
- 4) ռիբոսոմներում

19

Ինչպե՞ս են դասավորված լիալիդների մոլեկուլները պլազմային քաղանքում.

- 1) կազմում են երկշերտ, որում «պոչիկներն» ուղղված են դեպի ներս, իսկ «գլխիկները»՝ դեպի արտաքին կողմեր
- 2) դասավորված են մեկ շարքով
- 3) սպիտակուցների, նուկլեինաթրուների մոլեկուլների հետ կազմում են իրար կանոնավոր հաջորդող շերտեր
- 4) կազմում են երկշերտ, որում «պոչիկներն» ուղղված են դեպի արտաքին կողմեր, իսկ «գլխիկները»՝ դեպի ներս

20

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) կորիզակները առաջանում են քրոմոսոմի ո-ՌՆԹ-ի կառուցվածքը ծածկագրող հատվածների շուրջը
- 2) կորիզաբաղանքի ներքին քաղանքը պատված է ոիբոսմներով, էնդոպլազմային ցանցով
- 3) քրոմատինը ՌՆԹ-ի ու հիստոնային և ոչ հիստոնային սպիտակուցների համալիր է
- 4) կորիզակութիւնը քիմիական կազմը չի տարբերվում ցիտոպլազմայի քաղադրությունից

21

Ֆոտոսինթեզի մթնային փուլի համար ելանյութեր են.

- 1) օվան և ԱԵՖ-ը
- 2) ածխաբթու գազը, ատոմային ջրածինը և թթվածինը
- 3) ածխաբթու գազը, ատոմային ջրածինը և ԱԵՖ-ը
- 4) ածխաբթու գազը, մոլեկուլային ջրածինն ու թթվածինը

22

Ո՞ր պրոցեսն է տեղի ունենում միտոզի մետաֆազ փուլում.

- 1) քրոմատինների տարամիտումը դեպի բջջի քենոներ
- 2) քրոմոսոմների կոնյուգացիան
- 3) բջջի ցիտոպլազմայի բաժանումը
- 4) քրոմոսոմների դասավորումը իլիկի հասարակածային հարթության վրա

23

Ինչպե՞ս են անվանում տվյալ տեսակին պատկանող օրգանիզմների քրոմոսոմների հապլոիդ հավաքի ԴՆԹ-ի մոլեկուլների ամրողությունը.

- 1) գենոմ
- 2) գենոֆոնն
- 3) գենոտիպ
- 4) ֆենոտիպ

24

Ի՞նչ արդյունք է ստացվում հետերոզիզուտ և հոմոզիզուտ ռեցեսիվ առանձնյակների միահիբրիդ խաչաերման ժամանակ ոչ լրիվ դրմինանտության դեպքում.

- 1) 1:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 2) 1:2:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 3) 3:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 4) ֆենոտիպային միակերպություն

25

Մենդելի երրորդ օրենքը վերաբերում է միայն այն հատկանիշների ժառանգմանը, որոնց պայմանավորող գույց ալելային գեները գտնվում են.

- 1) տարբեր գույց հոմոլոգ քրոմոսոմներում
- 2) մեկ քրոմոսոմում
- 3) տարբեր չորս գույց ոչ հոմոլոգ քրոմոսոմներում
- 4) ոչ հոմոլոգ քրոմոսոմներում և ժառանգվում են շղթայակցված

26

Ինչպիսի՞ ճեղքավորում է ստացվում երկինտերոզիզուտ առանձնյակների խաչասերման արդյունքում՝ երկու ալելներով ել ոչ լրիվ դրմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) ֆենոտիպային ձևերի ավելի մեծ քանակ գենոտիպային ձևերի նկատմամբ
- 2) 9:3:3:1 ճեղքավորում՝ ըստ գենոտիպի
- 3) 9:3:3:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 4) ֆենոտիպային և գենոտիպային ձևերի հավասար քանակ

27

Ո՞ր կենդանու օրգանիզմում է հանդիպում արական հետերոզամետություն.

- 1) սողունի
- 2) դրոզոֆիլ պտղաճանճի
- 3) պոչավոր երկկենցաղի
- 4) բռունի

28

Ո՞ր հատկանիշն ունի ռեակցիայի ներ նորմա.

- 1) աչքերի գույնը
- 2) բույսի բարձրությունը
- 3) կովերի կաթնատվությունը
- 4) սերմերի զանգվածը

29

Ո՞ր նյութը կենսահանքային չէ.

- 1) օվկիանոսի ջուրը
- 2) քարածուխը
- 3) նավթը
- 4) հողը

30

Սև առնետները, որոնք նախկինում ապրում էին Եվրոպայի բնակավայրերում, դուրս մղվեցին մոխրագույն առնետների կողմից: Սա փոխարարերությունների ո՞ր ձևն է.

- 1) ներտեսակային գոյության կոիկ
- 2) ներտեսակային մրցակցություն
- 3) միջտեսակային գոյության կոիկ
- 4) պայքար անօրգանական աշխարհի անբարենպաստ պայմանների դեմ

31

Ի՞նչը բնորոշ չէ միկրոէվոլյուցիային.

- 1) ընթանում է տեսակի սահմաններում
- 2) հանդիսանում է էվոլյուցիոն գործընթացի սկզբնական փուլ
- 3) տեսակներից՝ նոր ցեղերի, ցեղերից՝ ընտանիքների առաջացման գործընթացն է
- 4) ավարտվում է նոր տեսակի առաջացմամբ

32

Ո՞րը իդիոադապտացիայի օրինակ չէ.

- 1) որոշ ձկների երկար լողակների առաջացումը
- 2) բույսերի պտուղների և սերմերի տարածման հարմարանքները
- 3) կատվաճկների մարմնի տափակությունը
- 4) ներքին բեղմնավորման ի հայտ գալը

33

Նշվածներից որո՞նք են համարվում ատավիզմներ.

- 1) մարդու մատների արանքում թաղանթների առկայությունը
- 2) մարդու ականջային և մաշկային մկանները
- 3) մարդու երրորդ կողի մնացորդը
- 4) մարդու կույր աղիքի որդանման ելուստը

34

Տեսակների միջև գործող ո՞ր փոխարարերությունն է օգտակար երկու տեսակների համար.

- 1) գիշատչությունը
- 2) կոմենսալիզմը
- 3) մուտուալիզմը
- 4) ամենսալիզմը

35

Ի՞նչն է Էկոհամակարգի առաջնային արտադրանքը.

- 1) պրոդուցենտների կենսազանգվածի աճը միավոր ժամանակում
- 2) Էկոհամակարգի կենսազանգվածի առաջացման արագությունը
- 3) կոնսումենտների կենսազանգվածի աճը միավոր ժամանակում
- 4) հետերոտրոֆների կենսազանգվածի աճը միավոր ժամանակում

(36-37) Խաչասերել են $aaBBCcDdEeFf \times AABbCcDDEeFf$ գենոտիպերով առանձնյակներ։ Ալելային գեների առաջին երեք զույգերում առկա է ոչ լրիվ դրմինանողություն, իսկ վերջին երեքում՝ լրիվ։ Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում։

36

Գտնել սերնդում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 24
- 2) 48
- 3) 54
- 4) 108

37

Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 24
- 2) 48
- 3) 54
- 4) 108

(38-39) Սննան շղթան կազմված է հետևյալ օդակներից՝ բույսեր-խոտակեր կենդանիներ-գիշատիչներ: Կենդանու զանգված է անցնում կերած սննդի զանգվածի 5 %-ը, և ընդունենք, որ յուրաքանչյուր սննան մակարդակ օգտագործում է միայն նախորդ սննան մակարդակի ներկայացուցիչներին, և զանգվածի կորուստը բույսեր-խոտակեր կենդանիներ օդակում 3800 կգ է:

38

Զանի^o կգ-ով է ավելացել գիշատչի զանգվածը.

- 1) 1
- 2) 10
- 3) 190
- 4) 3990

39

Զանի^o կգ է կազմել զանգվածի կորուստն ամբողջ շղթայում.

- 1) 3610
- 2) 3990
- 3) 4210
- 4) 190

40

Զախլիկ և պեպենոտ տղամարդն ամուսնացավ աջլիկ և առանց պեպենների կնոջ հետ: Աջլիկությունը և պեպեններ ունենալը դոմինանտում են համապատասխանաբար ձախլիկության և պեպեններ չունենալու նկատմամբ և հանդես են զալիս որպես առոտոսմային շղթայակցված հատկանիշներ: Նրանց առաջին երեխան ձախլիկ էր և առանց պեպենների: Գտնել ձախլիկ և պեպենոտ (հոր ֆենոտիպով) երեխաներ ծնվելու հավանականությունն այդ ընտանիքում.

- 1) 0
- 2) 1/2
- 3) 1/4
- 4) 3/4

41

Կենդանու ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր կենսագործունեության գործընթացն է համապատասխանում (նշված է ձախ սյունակում): Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Կենսագործունեության գործընթացը

- A. կեղծ ոտիկների օգնությամբ շարժում
- B. ավտոտրոֆ սնուցում
- C. չմարսված մնացորդների դուրս բերումը արտազատող անցրով
- D. սննդի հափշտակումը, կլանումը կեղծ ոտիկների օգնությամբ
- E. մտրակի օգնությամբ շարժում
- F. թարթիչների օգնությամբ շարժում

Կենդանու տեսակը

- 1. կանաչ էվգլենա
- 2. սովորական ամեռա
- 3. հողաքափիկ ինֆուզորիա

42

Չափանիշի ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) տեսակի ո՞ր չափանիշին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Չափանիշի բնութագիր

- A. քրոմոսոմների բնորոշ հավաքակազմ
- B. առանձնյակների արտաքին և ներքին կառուցվածքների նմանություն
- C. տեսակը կարող է գոյատել միջավայրի միայն որոշակի պայմաններում
- D. առանձնյակների բազմացման նմանություն
- E. տեսակը զբաղեցնում է խիստ որոշակի արեալ
- F. սպիտակուցների և նուկլեինաքրուների բնորոշ կառուցվածք և կազմ

Տեսակի չափանիշ

- 1. ձևաբանական
- 2. ֆիզիոլոգիական
- 3. գենետիկական
- 4. աշխարհագրական
- 5. էկոլոգիական
- 6. կենսաքիմիական

43

Սաղմնային օրգանացման ընթացքում ո՞ր օրգանը, հյուսվածքը (նշված է ձախ սյունակում) սաղմնային ո՞ր թերթիկից է (նշված է աջ սյունակում) առաջանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգան, հյուսվածք

Սաղմնային թերթիկ

- A. ատամների էմալ
- B. նյարդ
- C. աղիքի էպիթել
- D. ոսկոր
- E. երիկան
- F. մաշկի էպիթել
- G. կմախքի կրծիկային տարրեր
- H. խոհկների էպիթել

- 1. էկտոներմ
- 2. էնտոներմ
- 3. մեզոներմ

44

Մարդու օրգանիզմի գործառույթը և բնութագիրը (նշված է ձախ սյունակում) նեֆրոնի ո՞ր բաղադրիչն (նշված է աջ սյունակում) են համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործառույթ և բնութագիր

Նեֆրոնի բաղադրիչ

- A. իջնում է միջուկային շերտ, որտեղից ծնկաձև ոլորվում է և բարձրանում կեղևային շերտ
- B. գտնվում է երիկամի կեղևային շերտում, պատը կազմված է երկու շերտից, իսկ ներսում գտնվում է մազանոթային կծիկը
- C. երկրորդային մեզի տեղափոխում դեալի երիկամային ավազան
- D. օրգանիզմին անհրաժեշտ նյութերի հետադարձ ներծծում
- E. առաջնային մեզի առաջացում
- F. միանալով նման խողովակների հետ, ընդհանուր ծորանով բացվում է քուրզի գազաթային մաս

45

Մարդու նյարդային համակարգի ո՞ր բաժնին (նշված է աջ սյունակում) ո՞ր գործառույթն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործառույթ

Նյարդային համակարգի բաժին

- A. փորձի ձեռքբերում և կուտակում
 - B. բքագեղձերի աշխատանքի ճնշում և աղբենալինի արտադրության խթանում
 - C. լեղու արտադրության ակտիվացում
 - D. կմախքային մկանների լարվածության ապահովում
 - E. պարտադիր մասնակցություն պայմանական նեֆլեքսների առաջացմանը
 - F. կոպերի բարքում
- 1. պարասիմպաթիկ նյարդային համակարգ
 - 2. մեծ կիսագնդերի կեղև
 - 3. երկարավուն ուղեղ
 - 4. սիմպաթիկ նյարդային համակարգ
 - 5. միջին ուղեղ

46

Ինչպիսի՞ն է անարողիզմի ընթացքում տեղի ունեցող պրոցեսների հաջորդականությունը.

1. ամինաթրուների ռադիկալների միջև հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S-կապերի առաջացում
2. ԴՆԹ-ի շղթաներից մեկի վրա սինթեզվում է ի-ՈՒՆԹ
3. ամինաթրուների միջև պեպտիդային կապի առաջացում
4. ռիբոսոմի փոխազդում ի-ՈՒՆԹ-ի հետ
5. ամինաթրուների միջև ջրածնային կապերի առաջացում
6. ի-ՈՒՆԹ-ն կորիզից դուրս է գալիս ցիտոպլազմա
7. համապատասխան ամինաթրուների միացում փ-ՈՒՆԹ-ին

47

Մարդու օրգանիզմում ի՞նչ հաջորդականությամբ է տեղի ունենում արյան շրջանառություն՝ սկսած ներքին օրգանից՝ լյարդից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. թոքային երակ
2. աջ փորոք
3. թոքային զարկերակ
4. առրտա
5. ձախ փորոք
6. լյարդի երակ
7. աջ նախասիրտ

48

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում գործընթացները մարդու արտաշնչման, ապա ներշնչման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. կրծքավանդակի ծավալի մեծացում
2. ստոծանու մկանների բուլացում
3. օղի անցում թոքեր
4. օղի անցում կոկորդ
5. կրծքավանդակի ծավալի փոքրացում
6. կրծոսկրի շարժում դեպի առաջ
7. միջկողային մկանների կծկում
8. օքսիհեմոգլոբինի առաջացում

49

Ինչպիսի՞ն է մարդու լսողական վերլուծիչում գործընթացների հաջորդականությունը: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մուրճիկի տատանումներ
2. նյարդային ազդակների (գրգիռների) հաղորդում միջանկյալ ուղեղ
3. հիմային թաղանթի թելիկների տատանումներ
4. ձայնի բարձրության վերջնական գանազանում
5. ձայնային ալիքների որսում
6. ձվածն (օվալածն) պատուհանի թաղանթի տատանումներ
7. նյարդային վերջույթների գրգռում

50

Ինչպիսի՞ն է գործընթացների հաջորդականությունն անձրևորդի բազմացման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. գոտու վրա լորձային կցորդի առաջացում
2. երկու առանձնյակների հպում, սերմնահեղուկների փոխանակում
3. ձվարջիշների բեղմնավորում
4. կցորդի շարժում մարմնի երկայնքով դեպի գլխային ծայր
5. կցորդի կարծրացում և վերածում բոժոժի
6. ձվարջիշների և սերմնահեղուկի անցում կցորդի մեջ

51

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ոսկրային ձկների մեջքային և ենթապոչային գույգ լողակները կատարում են մարմնի դիրքի պահպանման դեր, իսկ կրծքային և փորային կենտ լողակները կատարում են դեկի և տեղաշարժման դեր
2. ոսկրային ձկներն ունեն ժապավենաձև, չհատվածավորված մկաններ
3. ջրի վերին շերտերը բարձրանալիս լողափամփուշտը լցվում է գագերով և ձկան մարմնի տեսակարար կշիռը մեծանում է
4. բրվածնով աղբատ ջրամբարներում ապրող ձկների որոշ տեսակներ որպես շնչառության լրացնուցիչ օրգան օգտագործում են նաև լողափամփուշտը
5. ձկների սրտի մկանների կծկման շնորհիվ փորոքից արյունը փորային առտայով շարժվում է դեպի խոհիկներ
6. ձկների միջին ուղեղից դուրս են գալիս հոտառական նյարդերը
7. ձկների միջակա ուղեղից դուրս են գալիս տեսողական նյարդերը

52

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները.

1. հանգիստ ներշնչման ժամանակ գազափոխանակությանը մասնակցող օղի քանակը կոչվում է թոքերի կենսական տարրություն
2. թոքաբշտերի պատերը կազմված են բազմաշերտ էպիթելային հյուսվածքից
3. հարթ մկանային հյուսվածքը կազմված է մանր իլիկաձև միակորիզ բջիջներից
4. կարճատեսության դեպքում ճառագայթների հատման կետն ընկնում է ցանցաթաղանթից առաջ
5. սրտի ձախ նախասրտի և ձախ փորոքի բացվածքի սահմանում գտնվում են եռափեղկ փականները
6. վեգետատիվ նյարդային համակարգի նյարդաթելերը մարմնական նյարդաթելերի համեմատ ավելի բարակ են, և ավելի դանդաղ են հաղորդում նյարդային ազդակները
7. երկար խողովակաձև ոսկրի շրջոսկրի (վերնոսկրի) արտաքին շերտի բջիջների բաժանման արդյունքում ոսկրն ածում է հաստությամբ, իսկ ներքին շերտի բջիջների բաժանման արդյունքում՝ երկարությամբ

53

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- մեյզը տեղի է ունենում սեռական գեղձերի աճման գոտում
- միտոզի անաֆազից մինչև ինտերֆազի S փուլը յուրաքանչյուր քրոմոսոմ կրում է մեկ քրոմատիդ
- մոդիֆիկացիոն փոփոխականության ձևերից է համակցական փոփոխականությունը
- կուսածնության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դուստր առանձնյակն առաջանում է մեկ ծնողական օրգանիզմի սոմատիկ բջիջից
- կոճղարմատը, պալարը, ստխուկը ձևափոխված ընձյուղներ են
- մեղուների մոտ չբեղմնավորված ձվաբջիջներից զարգանում են արուները՝ բուերը

54

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- ցիտոզի ժամանակ ծախսվում է ԱԵՖ
- կապտականաչ ջրիմուռները որպես ջրածնի աղբյուր օգտագործում են ջուրը, այդ պատճառով նրանց ֆոտոսինթեզը չի ուղեկցվում թթվածնի անջատումով
- էներգիական փոխանակության թթվածնային փուլում, երբ արտոնային պոտենցիալը միտոքոնոդիումների բաղանքի երկու կողմերում հասնում է որոշակի սահմանային մեծության, ջրածնի արտոններն էլեկտրական դաշտի ագրեցության տակ մղվում են ԱԵՖ-սինթազի անցուղու միջով՝ ներքին մակերևույթից դեպի բաղանքի արտաքին կողմը
- ԴՆԹ-ի կազմում հանդիպող գուանինային և ցիտոզինային ազոտական հիմքերով նուկլեոտիդները իրենց կառուցվածքով և կազմով չեն տարբերվում ՌՆԹ-ների կազմում հանդիպող գուանինային և ցիտոզինային ազոտական հիմքերով նուկլեոտիդներից
- մկաններում ԱԵՖ-ի ճեղքման ակտիվությամբ օժտված կծկվող սպիտակուցներից է միոզինը
- հատիկավոր էնրոպլազմային ցանցով հարուստ են մարդու ենթաստամոքսային գեղձի, թքագեղձերի բջիջները
- բջջային կենտրոնը կազմված է երկու փոքր զլանաձև մարմնիկներից՝ միկրոխողովակներից, որոնց պատը կազմված է երեքական խմբերով դասավորված ցենտրիոններից

55

Նշել բոլոր սխալ պնդումները.

- գորտի ակնազնդերը օգնում են սննդի կլիման գործընթացին
- թռչունների ձախ փորոքից դուրս է գալիս առտայի ձախ աղեղը
- սննդի շմարսված մասերը հիդրայի մարմնից հեռացվում են հատուկ արտազատող անցքով
- ժապավենաձև որդերի մարսողական համակարգը հետ է զարգացել
- նախազազանները չունեն շրբունքներ, ունեն կոյանց
- թերի կերպարանափոխությամբ զարգանում են մրջյունները, բգեղները
- անձրևորդի կրային գեղձերի ծորանները բացվում են կերակրափողի մեջ

56

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. ատամի խոռոչը լցված է կակղանով
2. ստամոքսում ավարտվում է սպիտակուցների, ճարպերի և ածխաջրերի ճեղքումը մինչև մոնոմերներ
3. լյարդում լեղու արտադրությունն արգելակվում է երկարավուն ուղեղից հաղորդվող նյարդային գրգիռների ազդեցության տակ
4. B_{12} ավիտամինոզի պարագայում զարգանում է չարորակ սակավարյունություն
5. հաստ աղից ուղիղ աղի անցման տեղում գտնվում է կույր աղին՝ իր որդաննան ելունդով
6. A վիտամինը մասնակցում է տեսողական գումակ ոռղոպսինի ձևավորումն ապահովող ֆերմենտների աշխատանքին
7. տասներկումատնյա աղիքում սննդախյուսը ենթարկվում է լեղու և ենթաստամոքսահյութի ազդեցությանը

57

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. կորիզաքաղանքը և կորիզակները տեսանելի են միայն բաժանվող բջիջներում
2. էնդոպլազմային ցանցը բջջային թաղանքների կառույց է, սակայն ի տարբերություն պլազմալեմի՝ այդ թաղանքը շատ բարակ է
3. մեղուների և մրջյունների օրգանիզմում սեռական քրոմոսոմներ չկան. արուների բոլոր բջիջներն ունեն քրոմոսոմների դիպլոդի հավաք
4. պլաստինների կազմության մեջ մտնող գրանները, մեկը մյուսի վրա դասավորվելով, առաջացնում են բազմաթիվ թիթեղիկներ, որոնք կոչվում են թիլակոփներ
5. Գոլջիի ապարատը բնորոշ է կորիզավոր բջիջներին, ունի ցանցանման կառուցվածք
6. ոիբրոսմի բաղադրության մեջ սպիտակուցների և ո-Ռ-ՆԹ-ի քանակությունները գրեթե հավասար են
7. միտոքոնդրիումներին բնորոշ է լիպիդների փոխանակությունը

58

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. պոպուլյացիան վերտեսակային խմբավորում է
2. առաջին կարգի կոնսումենտները որպես սնունդ օգտագործում են պրոդրուցենտներին
3. երկարակտերիաները և ծծմբակտերիաները ավտոտրոֆ քեմոսինթեզողներ են
4. լրված դաշտի տարածքում լայնատերև անտառի վերականգնումը հանդիսանում է առաջնային սուկցեսիայի օրինակ
5. Էվոլյուցիայի շարժիչ ուժ է բնական ընտրությունը
6. ռադիոակտիվ ճառագայթումը, մրցակցությունը, գիշատչությունը, ջերմաստիճանը ոչ կենսածին էկոլոգիական գործոններ են

59

Նշել բոլոր սխալ պնդումները.

- բեղմնավորման ժամանակ գամետմերի պատահական զուգակցման գործընթացն ընկած է համակցական փոփոխականության հիմքում
- իգական օրգանիզմը զարգանում է այն գամետից, որի ձևավորման ժամանակ մեյողի առաջին բաժանման պրոֆազում, տրամախաչման արդյունքում, իգական սեռը պայմանավորող երկու X քրոմոսոմները հայտնվում են մեկ շղթայակցման խմբում
- հատկանիշների ճեղքավորման օրենքը Մենդելի երկրորդ օրենքն է
- Մենդելն իր հետազոտություններում օգտագործում էր մաքուր գծերին պատկանող օրգանիզմներ, որոնք մի քանի սերունդ հետազոտվող հատկանիշի առումով շարունակ տալիս էին ճեղքավորում միևնույն հարաբերությամբ
- գամետների մաքրության օրենքը պնդում է, որ գամետների առաջացման ժամանակ դրանցից յուրաքանչյուրի մեջ ընկնում են ժառանգական զույգ գործոններից տվյալ հատկանիշին համապատասխանող երկու գործոնները
- տրամախաչումը տեղի է ունենում մեյողի առաջին բաժանման պրոֆազում կոնյուգացիայի ժամանակ

(60-61) Գենի զանգվածը 232 500 գ.ա.մ. է:

60

Որոշել տվյալ գենով կոդավորվող սպիտակուցի մոլեկուլային զանգվածը (գ.ա.մ.-ով), եթե մեկ նուկլեոտիդի միջին մոլեկուլային զանգվածը 310 գ.ա.մ. է, իսկ մեկ ամինաքրթվային մնացորդինը՝ 130 գ.ա.մ.։

61

Զանի^o քիմինային նուկլեոտիդ է պարունակվում տվյալ գենում, եթե հայտնի է, որ U/G հարաբերությունը հավասար է 0,5-ի:

(62-63) Ծառը 30 օրվա ընթացքում (16-ժամյա լուսային օր) սինթեզել է 19,2 կգ օրգանական նյութ (գլուկոզ):

62 Գտնել ծառի տերևային մակերևույթի մակերեսը (մ^2):

63 Քանի՞ գրամ O_2 է արտադրվել այդ ընթացքում:

64 Գլուկոզի ճեղքման անբթվածին փուլում անջատված ջերմային էներգիայի 15 %-ը՝ 420 կՋ հեռացվել է օրգանիզմից ջերմահաղորդման միջոցով: Քանի՞ կՋ է կազմում ընդհանուր էներգիան, եթե հայտնի է, որ ամբողջ պրոցեսի արդյունքում առաջացել է 460 մոլ H_2O : Ընդունել, որ 1 մոլ գլուկոզից մինչև կարնաքթու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա:

(65-66) Օրվա ընթացքում մարդու մաշկի մակերևույթից գոլորշիացել է 0.8 կգ քրտինք:

65

Որոշել օրվա ընթացքում մարդու մաշկի 1սմ^2 մակերևույթից ճառագայթված ջերմային էներգիայի քանակը (Ω -ով), եթե մաշկի մակերեսը 2մ^2 է: Հաշվի առնել, որ մաշկի մակերևույթից ճառագայթվող ջերմային էներգիան 3 անգամ գերազանցում է գոլորշիացման միջոցով հեռացվող էներգիայի քանակը և 1 գ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է $2,45 \text{ կ}\Omega$ էներգիա:

66

Ընդամենը քանի^o գրամ քրտինք կգոլորշիացվեր մաշկի մակերևույթից, եթե ճառագայթված էներգիան նույնական ծախսվեր քրտինքի գոլորշիացման համար:

- (67-68) Օրվա ընթացքում ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու օրգանիզմում յուրացվել է 768 լ Օ₂: Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագացել են 2 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,6 անգամ, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 2, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղվող արյան ծավալը՝ 1,2 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 20 շնչառական շարժում, սրտի բոլորաշրջանի տևողությունը 0,8 վրկ. է և մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղվում է 65 մլ արյուն:

67

Քանի՞ ժամ է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը:

68

Մեկ օրվա ընթացքում քանի՞ լիտր արյուն են արտամղել փորոքները:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. արյան II խումբ ունեցող մարդկանց էրիթրոցիտների թաղանթներում առկա է Յ ագլյուտինինը, իսկ պլազմայում՝ A ագլյուտինոգենը
2. ավշային մազանոթները միմյանց միանալով առաջացնում են խոշոր անոթներ, որոնք երկու մեծ ծորաններով թափվում են ձախ նախասրտում թացվող սիներակների մեջ
3. առողջ մարդու օրգանիզմում 1 մմ³ արյան մեջ պարունակվում է 60000-80000 լեյկոցիտ
4. կալցիումից զուրկ արյունը չի մակարդվում
5. լիմֆոցիտների հասունացումն ավարտվում է ավշային հանգույցներում, ուրցագեղձում
6. էրիթրոցիտները չափսերով գերազանցում են քրոմոցիտներին և լեյկոցիտներին

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. հապլոիդիայի հետևանքով հապլոիդ օրգանիզմի մարմնական քջիզներն ունենում են քրոմոսոմների դիպլոիդ հավաք
2. հապլոիդներն անպատուղ են, նրանց մոտ դրսնորվում են ռեցեսիվ գեները
3. պոլիպլոիդիայի առաջացման պատճառներից են մեյօզի գործընթացի այնպիսի խանգարումները, որոնք բերում են չուղուկցված թվով քրոմոսոմներ պարունակող գամետների առաջացման
4. Դառնի սինդրոմն անեուպլոիդիայի հետևանք է
5. կանանց օրգանիզմում հավելյալ X քրոմոսոմի առկայությունը հարուցում է Շերլշևսկու և Թերների սինդրոմը
6. ալբինիզմ և ֆենիլկետոնուրիա հիվանդությունների պատճառն առատումային դրմինանտ գենի մուտացիան է